ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ավետիս Հարությունյան, Արշակ Բալյան

Մուտք

Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայությունը՝ ենթարկվելով երիտթուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանության կանխամտածված քաղաքականությանը, կանգնեց սպառնալուռ բնաջնջման վտանգի դեմ հանդիման: Նա անցավ անասելի փորձությունների դժնդակ մի ճանապարհ՝ ենթարկվելով արհավիրքների և չարախին փորձությունների: Ողջ մնացածներից շատերը գաղթեցին և տեղափոխվեցին ինչպես աշխարհի տարբեր ծագեր, այնպես էլ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս: 1914-1917 թթ. իրականացված մի շարք գաղթերի ու բռնագաղթերի հետևանքով Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի հյուսիսային շրջանների հայ ազգաբնակչության թվաքանակն իսպառ նոսրացավ:

Պատերազմի նախօրյակին, Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից 1912թ. կատարված վիճակագրության համաձայն 2.615.000 (որոշ աղբյուրներում՝ 2.470.000)[1] բնակչություն ունեցող Օսմանյան Թուրքիայի արևելյան՝ հայկական 6 նահանգներում հայերի թվաքանակը կազմում էր 1.018.000, այսինքն բնակչության՝ 38,9 %-ը[2]:

Ըստ մեկ այլ՝ 1914 թ. մարդահամարի տվյալներով ամբողջ աշխարհում ապրում էր շուրջ 4 մլն. 470 հազ. (որոշ տվյալների համաձայն՝ 4 մլն. 160 հազ.) հայ, որից՝ 2 մլն. 54 հազ. (45,9 %-ը) (որոշ տվյալների համաձայն՝ 1մլն. 500 հազ.) բնակվում էր Ռուսական կայսրության տարածքում, 2 մլն. 26 հազ. (45,4 %-ը) (որոշ տվյալների համաձայն՝ 2մլն. 380 հազ.)՝ Օսմանյան կայսրության սահմաններում, իսկ 390 հազ. (8,7 %-ը) (որոշ

---

[1] ***The Statesman's year-book,*** London, 1915, p.1394.

[2] Հորիզոն» 1915թ. հունիսի 11, թիւ 188:

տվյալների համաձայն՝ 280 հազ.)՝ աշխարհի տարբեր երկրներում[1]:

Պատմագիտական գրականության մեջ ցեղասպանությունից մի կերպ փրկված և Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում ապաստանած հայ գաղթականության ստույգ թվաքանակի վերաբերյալ նախկինում շրջանառվել են հակասական տվյալներ՝ սկսած 300 հազ. մինչև՝ 650 հազ.[2]: Նման մոտեցումը պայմանավորված է եղել այն իրողությամբ, որ հայ գաղթականության թվաքանակի պատմությունը հատուկ ուսումնասիրման չի արժանացել:

Հայ գաղթականության 1915թ. հունվարի 30-ի մեկօրյա վիճակագրությունը

Առաջին՝ 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթը լուրջ դժվարություններ առաջ բերեց գաղթականների վիճակագրության կազմակերպման և անցկացման առումով: Այդ մասին Երևանի նահանգապետը նահանգի գավառապետերին ուղղված 1915 թ. հունվարի 3-ի իր հեռագրում խոր մտահոգություն էր արտահայտում, նշելով, որ գաղթի ընթացքում անհնար եղավ գաղթականների հաշվառում իրականացնել սահմանամերձ շրջաններում՝ Ջուլֆայում և Իգդիրում, որի համար էլ նա առաջարկում էր գաղթականներին գյուղերում տեղավորելուց հետո, կազմել գաղթականների մանրամասն անվանական ցուցակները[1]:

Վիճակագրական հանձնաժողովը ստանալով Երևանի «Եղբայրական օգնության» կոմիտեի և համառուսական «Զեմսկի միության» հանձ-

---

[1] **Յուշամատեան Մեծ եղեռնի. 1915,** Բեյրութ 1965, էջ, նաև *«The Journal of Race Development»,* Clark University, april 1917, № 4, p. 465-466:

[2] **Ս. Ալիխանյան**, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Երևան, 1956, էջ 112, նաև **Ս. Վարդապետյան**, Հայաստանի օգնության կոմիտե (1921-1937), Երևան, 1966, էջ 19, նաև **Զ. Գրիգորյան**, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1967, էջ 118, նաև **Վ. Ե. Խոջաբեկյան,** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 136: Ամենևին էլ համոզիչ չէ Է.Գ.Դանիելյանի այն մոտեցումը, որ Անդրկովկասում երբեք 300 հազար արևմտահայ գաղթական չի եղել: Տե՛ս **Է.Դանիելյան,** Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականության թվաքանակի հարցի շուրջ (1914-1917թթ.) «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2002 թ. մայիս-օգոստոս, թիվ 2 (606), էջ 117-118:

[1] ՀԱԱ, ֆ.102, ց.1, գ.1063, թ.73:

նարարականները 1915 թ. հունվարին ձեռնամուխ եղավ Օսմանյան Թուրքիայից և Պարսկաստանից տեղահանված գաղթականների, ինչպես նաև պատերազմական գործողությունների պատճառով Արևելյան Հայաստանում հայտնված ռուսահպատակ փախստականների վիճակագրության կազմակերպման գործը:

Նախատեսված մարդահամարն անցկացվեց 1915 թ. հունվարի 30-ին Վեհափառ հայրապետի տնօրինության ներքո գտնվող «Եղբայրական օգնության» կոմիտեի և «Զեմսկի միության» նախաձեռնությամբ ու հանձնարարությամբ: Այն բոլոր տեղերում կրում էր վիճակագրության մեկօրյա բնույթ, ինչպես այդ որոշվել էր վիճակագրական հանձնաժողովի 1915 թ. հունվարի 10-ի նիստում[2]: Մեկօրյա վիճակագրության անցկացումը թելադրված էր այն հանգամանքով, որ գաղթականությունը գտնվելով անընդհատ տեղաշարժման մեջ, նրանց տարբեր ժամանակներում վիճակագրելն առաջ կբերեր իսկական շփոթություն:

Վիճակագրությունն ընդգրկեց այն բոլոր շրջանները, ուր ապաստան էին գտել ոչ միայն Օսմանյան Թուրքիայից ու Պարսկաստանից տեղափոխված գաղթականները, այլև արևելահայ փախստականները: Վիճակագրության ենթարկվեցին Երևանի նահանգի 7, այն է՝ Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Երևան քաղաքի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Նոր Բայազետի և Կարսի շրջանի՝ 4 գավառները, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը[3]:

1915 թ. հունվարի 30-ի վիճակագրության համաձայն 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերյան իրադարձություններից անմիջապես հետո Բասենի, Նարիմանի, Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի և Բաշկալեի գավառներից, ինչպես նաև Կարսից, Կաղզվանից, Արդահանից, Օլթիից և Արդվինից Անդրկովկաս ապաստանեցին համապատասխանաբար 33078 (2124 ընտանիք) և 9534 (1411 ընտանիք) հայ գաղթականներ: 1915թ. հունվարի 30-ի վիճակագրական տվյալների համաձայն Օսմանյան Թուրքիայից ու Պարսկաստանից հանգրվանած գաղթականների և առհասարակ ռուսահպատակ փախստականների ընդհանուր թվաքանակը կարճ ժամանակամիջոցում հասավ շուրջ 67 հազ.-ի, որից մոտ

---

[2] ՀԱԱ, ֆ.50, ց.1, գ.28, թ.25:

[3] «Հորիզոն» 1915թ. մարտի 7, թիւ 52:

50 հազ.-ը հայեր էին[1]: Գաղթականների մեծ մասը՝ 60.5 հազ.-ը, ապաստանեցին Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի և Ախալքալաքի գավառներում[2]:

Ամփոփելով 1915 թ. հունվարի 30-ին անցկացված մեկօրյա մարդահամարի տվյալները, կարելի է եզրակացնել, որ 1. բացակայել էր գիտական հիմունքներով կատարված վիճակագրությունը: 2. Կապված սովի և համաճարակների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատում տիրող իրավիճակի և Անդրկովկասի քաղաքական կացության վայրիվերումների հետ, գաղթականությունը բավականին հոսուն էր եղել և չէր ունեցել իր մնայուն տեղավայրերը: 3. Վիճակագրությունն անմիջականորեն իրականացրած որոշ մասնագետներ ընդհանրապես շփոթել էին «հայ գաղթականություն» հասկացությունն «արևմտահայ գաղթականություն» հասկացության հետ: 4. Գաղթականների համար ամենածանր օրերին հայ գյուղացիությունը ցուցաբերել էր գովելի վերաբերմունք և աջակցություն, որը ո՛չ միայն վեր էր ամեն տեսակի գնահատանքից, այլև հանդիսանում էր մարդասիրական մեծ առաքելություն: 5. Ավելի քան մեկ ամիս ստանձնելով մեծ թվով գաղթականների պարենային հոգածության գործը, գյուղական հայ ազգաբնակչությունն իր հերթին հայտնվել էր պարենային ճգնաժամի վտանգի առջև, որի պատճառով էլ ժողովուրդը շատ տեղերում փաստորեն դադարեցրել էր գաղթականների խնամատարությունը: 6. Գաղթականներին օժանդակելու գործում ջերմ աջակցություն էին ցույց տվել տեղական երիտասարդ ուժերը և մասնավորապես՝ ուսուցիչները: Սակայն նրանք էլ ավելի ակտիվ դեր կկատարեին, եթե գաղթականական մարմինների կողմից նպաստների բաշխման գործը հանձնվեր նրանցից կազմված ներկայացուցիչներին, քան թե շրջիկ անհատներին կամ գործակալներին: 7.Վիճակագրական տախտակների համաձայն գաղթականների տեղաբաշխումն իրականացվել էր անհամաչափությամբ, որի արդյունքում խիստ ծանրաբեռնվել էին Էջմիածնի, Երևանի ու Նախիջևանի գավառները: 8. Համընդհանուր բնույթ էր կրում այն իրողությունը, որ նպաստներն առահասարակ հասանելի էին միայն կենտրոնական շրջաններում գտնվող գաղթականներն համար, որոնք էլ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ.126, ց.1, գ.1, թթ.936-1368, գ.2, թթ.557-928:

[2] Տե՛ս նույն տեղում:

առատ բաժին էին ստանում, մինչդեռ մյուս վայրերում տեղաբաշխված գաղթականներն ընդհանրապես զուրկ էին մնում նպաստից: Նույն վիճակն էր տիրում նաև հագուստ ու անկողին բաժանելու հարցում: 9. Աչքի էր ընկնում վարակիչ հիվանդությունների տարածումը՝ հատկապես այն շրջաններում, ուր գաղթականներ շատ կային: 10. Կային շրջաններ, հատկապես՝ Դարալագյազի Քեշտազ, Արփա, Ելփին, Այնազուր, Ռինդ գյուղերը, ուր զետեղված էին միայն ասորիներ: 10.Փախստականների 70 %-ը կազմում էին կանայք, իսկ երեխաների մեջ, ընդհակառակը, 60%-ը արական սեռի ներկայացուցիչներ էին: Գաղթականների մեջ կանանց թվաքանակի մեծամասնությունը բացատրվում էր ցեղասպանության իրողությամբ, քանի որ թուրքական բանակի զորակոչի և հետագայում հայ զինվորականների կոտորածների պատճառով խիստ նվազել էր տղամարդկանց թվաքանակը: Ինչ վերաբերում է տղա երեխաների քանակի տոկոսային գերակայությանը, ապա այն պայմանավորված էր կոտորածների բնույթով: Երիտթուրքերը սեռական խտրականություն չէին դրել տղաների և աղջիկների միջև՝ ինչպես մեծահասակների դեպքում, որի պատճառով էլ պահպանվել է երեխաների արական կազմի թվական գերազանցությունը:

1916 թ. հունվարի 14-ի գաղթականական համընդհանուր մարդահամարը

1915 թ. ամռանը Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած ռազմավարական տեղաշարժերի և այդ ամենի, ինչպես նաև կոտորածների արդյունքում կազմակերպված 1915 թ. հուլիսյան մահասարսուռ գաղթը պատճառ դարձան գաղթականության նոր ալիքի սկզբնավորման և ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ անդրկովկասյան տարածաշրջանում գաղթականության թվաքանակի ստվարացման, որի արդյունքում 1915 թ. հուլիսի 20–ից մինչև սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Կովկասյան երկրամասում փախստականների մոտավոր թվաքանակը հասավ 146000, որից 7000-ը տեղաբաշխվել էր Ալեքսանդրապոլ քաղաքում, 24000-ը՝ Ալեքսանդրապոլի գավառում, 35000-ը՝ Էջմիածնում, 10000-ը՝ Էջմիածնի գավառում, 20000-ը՝ Երևանում, 10000-ը՝ Երևանի գավառում, 15000-ը՝ Մարգարա գյուղում, 6000-ը՝ Իգդիրում, 4000-ը՝ Գանձակի նահանգում, 15000-ը՝ Նոր Բայազետի գավառում: Տեղաշարժերի և տեղափոխությունների արդյունքում սեպտեմբերի

18-ին Էջմիածնում մնացել էր 8000, Ալեքսանդրապոլի գավառում՝ 15000, Երևանում՝ 15000, Մարգարայում՝ 12000 գաղթական: Սակայն դրա փոխարեն աճել էր փախստականների թվաքանակը Գանձակի նահանգում: Ա. Խատիսյանի հաշվարկներով այդ ընթացքում մահացել էր 10000 հոգի, որից 4500-ը՝ միայն Էջմիածնում[1]:

1915թ. աշնանը Ռուսաստանի Պետական դումայի անդամ Մ. Պապաջանյանը՝ գաղթականների թվաքանակի մասին որոշակի տեղեկություններ իմանալու ակնկալությամբ դիմում է Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի լիազոր Ա. Թամամշևին: Վերջինս իր պատասխան հեռագրում տեղեկացնում է, որ 1915թ. հոկտեմբերին Անդրկովկասում ապաստանել էին 180000 հայ փախստականներ, որից 110000-ը՝ Երևանի, 20000-ը՝ Գանձակի, 30000-ը՝ Թիֆլիսի և 20000-ը Կարսի նահանգներում[2]:

Կովկասյան ճակատի փախստականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն 1916 թ. հունվարի 1-ին Կովկասյան երկրամասում ապաստանել էին 182800 գաղթականներ, որոնցից Երևանի նահանգում՝ 105000, Գանձակի նահանգում՝ 9500, Թիֆլիսի նահանգում՝ 7400, Սևծովյան նահանգներում՝ 2300, Ստավրոպոլի նահանգում՝ 6200, Տերսկի շրջանում՝ 3500, Կուբանի շրջանում՝ 10000, Կարսի շրջանում՝ 24000, Բաթումի շրջանում՝ 12000, Բաքվի նահանգում՝ 2900 հոգի[3]: Գաղթականներից 51873-ը տղամարդիկ էին, 61522-ը՝ կանայք, իսկ 69405-ը՝ երեխաներ: 51600 գաղթականներ էլ կային նաև Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքներում և ռուսական հյուպատոսական շրջաններում, այդ թվում Վանում՝ 5000 (որից՝ 2615 տղամարդ, 1075 կին և 1310 երեխա), Բայազետի շրջանում՝ 1100 (որից՝ 165 տղամարդ, 555 կին և 380 երեխա), Դիադինի շրջանում՝ 6000 (որից՝ 1800 տղամարդ, 1500 կին և 2700 երեխա), Ուրմիայի շրջանում՝ 15000 (որից՝ 4000 տղամարդ, 6000 կին և 5000

---

[1] «Փայլակ», 1915թ. սեպտեմբերի 3, թիւ 51, նաև «Հորիզոն», 1915թ. հոկտեմբերի 27, թիւ 241:

[2] «Հորիզոն», 1915թ. հոկտեմբերի 15, թիւ 233, նաև «Արեւ», 1915թ. հոկտեմբերի 17, թիւ 175:

[3] «Մշակ», 1916թ. հունվարի 16, թիւ 9, նաև «Кавказ», 1916г. 12 января, № 8, նաև «Армяне и война», 1916г. март, № 1:

երեխա), Դիլմանի շրջանում՝ 20000 (որից՝ 2000 տղամարդ, 9000 կին և 9000 երեխա) և Խոյի շրջանում՝ 4500 հոգի (որից՝ 1000 տղամարդ, 1300 կին և 2200 երեխա)[1]: Ընդամենը՝ 234400 գաղթական, որից 65400-ը՝ տղամարդիկ, 81000-ը՝ կանայք և 88000-ը՝ երեխաներ:

Գաղթականների թվաքանակում որոշակի ճշգրտումներ և հստակեցումներ մտցնելու նպատակով Քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի լիազոր Ա. Թամամշևի անմիջական նախաձեռնությամբ և հասարակական ու ազգային կազմակերպությունների օժանդակությամբ 1916 թ. հունվարի 14-ին անցկացվեց գաղթականական առաջին ընդհանուր մարդահամարը, որին մասնակցեց ավելի քան 700 հոգի:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերությանը կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի զեկույցի համաձայն գաղթականների ցուցակագրությունն ըստ նահանգների ուներ հետևյալ պատկերը.

Նահանգներ	կայանների թիվը	ընտանիքների թիվը	հասակ				սեռ	
			մինչև 5 տ.	5-16 տ.	16 տ. բարձր	ընդհ. թիվը	տղա-մարդիկ	կանայք
Երևանի	263	20394	1938	28831	55159	92928	45705	47223
Թիֆլիսի	14	3191	1549	3750	7951	13250	6532	6718
Գանձակի	51	2279	352	1996	4237	6585	3380	3205
Կարսի	90	2305	1717	2964	5643	10324	5411	4913
Պարսկաստանի	24	2408	925	3195	6334	10454	4022	6432
Էրզրումի	47	4551	2470	5349	12499	20318	10059	10259
Ընդամենը՝	489	35128	15951	46085	91823	153859	75109	78750[2]

Վիճակագրությունից երևում է, որ հայ գաղթականների թվաքանակը նշված նահանգներում կազմում էր 153859, որից 75109-ը՝ տղամարդիկ,

---

[1] «Арянский вестник» 1916г., № 1, նաև «Համբաւաբեր», 1916թ. հունվարի 10, թիւ 3:

[2] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.132, թ.33: Отчеть Деятельности состоящыхь при Кавказскомь Армянскомь Благотворительномь Обществе: Армянскаго Центральнаго Комитета помощи пострадавшимь оть войны и Отдела по снабженію продвольствіемь бехенцевь Кавказскаго фронта на Казенныя средства. Сь августа 1914 г. по январь 1917 г. Тифлись, 1917, с. 4.

իսկ 78750-ը՝ կանայք: Այս թվի վրա պետք է ավելացնել նաև մեկօրյա հաշվառումից դուրս մնացածներին, այդ թվում՝ 4000 որբեր, որոնք գտնվում էին ապաստարաններում, 12000 գաղթականներ՝ Վանի նահանգում, 10000 գաղթականներ՝ Բիթլիսի նահանգում, 1000 գաղթականներ՝ Էրզրումում, 3000 գաղթականներ՝ Բաքվում, 1000 գաղթականներ՝ Ախալքալաքում[1], ընդամենը՝ 31.000, որով հայ գաղթականության ընդհանուր թիվը կազմում էր՝ 184.859:

Աղյուսակից պարզ երևում է, որ Երևանի նահանգն առաջին տեղում էր ինչպես՝ գաղթականական կայանների՝ 263, այնպես էլ գաղթականական ընտանիքների՝ 20394, և ընդհանրապես գաղթականների ընդհանուր թվաքանակով: 1916թ. հունվարին այստեղ տեղակայվել էին 92.928 գաղթականներ: Կովկասյան երկրամասում ամենից քիչ թվով գաղթականներ հանգրվանել էին Գանձակի նահանգում և դա հասկանալի էր, քանի որ Գանձակը Թիֆլիսի և Բաքվի հետ համեմատած ինչ-որ տեղ զիջում էր իր վարչական ու տնտեսական նշանակությամբ և գաղթականները գերադասում էին ապաստանել Կովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններում: Այստեղ խոսքը չէր կարող վերաբերել Երևանին, քանի որ այն իր բոլոր նշանակությամբ զիջում էր վերոհիշյալ երեք կենտրոններին: Սակայն մեծ քանակությամբ գաղթականների կենտրոնացումը Երևանում և Երևանի նահանգում պայմանավորված էր տարածքի աշխարհագրական դիրքով, Արևմտյան Հայաստանին նկատմամբ նրա սահմանակից լինելու հանգամանքով և որ ամենակարևորն է՝ հայրենիքի գաղափարով:

Չնայած Թիֆլիսի նահանգում կային ամենից քիչ թվով գաղթականական կայանները՝ 14, սակայն գաղթականական ընտանիքների թվով այն երրորդն էր:

Մինչև տեղահանությունը գաղթականների քանակն՝ ըստ բնակության վայրերի, ներկայացնում է հետևյալ պատկերը.

[1] Նույն տեղում:

Բնակչությունը	Բնակության վայրերը մինչև տեղահանությունը									
	Օսմանյան Թուրքիա (նահանգ)							Պարս-կաս-տան	Ռուսաս-տան	
	Էրզրումի	Վանի	Բիթլիսի	Սվազի	Խարբերդի	Դիարբեքիրի	Կ.Պոլսի	Աստրա-խանի	Կարսի	Բաթումի
Երևանի նահ.	2956	11957	5174	4	4	6	1	114	176	2
Թիֆլիսի	686	1041	1367	-	-	4	2	27	50	14
Գանձակի	27	1667	585	-	-	-	-	-	-	-
Կարսի	864	662	625	-	-	-	-	72	73	9
Պարսկաստանի	177	1196	283	-	-	-	-	752	-	-
Էրզրումի	1556	2063	931	-	-	1	-	-	-	-
Ընդամենը՝	6266 (ընտա-նիք)	18586	8965	4	4	11	3	965	299	25[1]

Աղյուսակից երևում է, որ Օսմանյան Թուրքիայից գաղթել էին՝ 33839, Պարսկաստանից՝ 965, իսկ Կարսից և Բաթումից՝ 324 գաղթականական ընտանիքներ: Թուրքիայից ամենից շատ գաղթել էին Վանի նահանգից՝ 18586 ընտանիք, իսկ ամենից քիչը՝ Կ.Պոլսից, Սվազից, Խարբերդից և Դիարբեքիրից: Եվ դա հասկանալի է, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից ձեռնարկված արևմտահայերի զանգվածային տեղահանությունների և կոտորածների քաղաքականության մեծ մասը բաժին էր ընկել ռուսական կայսրության սահմաններից հեռու գտնվող, այն է՝ Սվազի, Խարբերդի, Դիարբեքիրի նահանգներին: Բացի այդ, վերոհիշյալ նահանգների ազգաբնակչության այն մասը, որին հաջողվել էր փրկվել թուրքական ոճրագործություններից, տարածքայի հեռավորության պատճառով ապաստանել էին ոչ թե Կովկասում և Ռուսաստանի այլ շրջաններում, այլ Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև եվրոպական մի շարք երկրներում: Կար նաև մի երրորդ հանգամանք, որը պայմանավորում էր հիշյալ աղյուսակի անկանոն տեղաբաշխումը՝ այն Վանի 1915 թ. Ապրիլյան հերոսամարտն էր, որը Վասպուրականի բնակչության մեծ մասին փրկել էր կործանումից:

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.132, թ. 34:

Գաղթած ընտանիքների թվաքանակի և կորուստների մասին պատկերացում է տալիս ստորև ներկայացված աղյուսակը:

Նահանգ	Ընտանիք		Ընտանիքից հեռացածներ		
	Թիվը	Հոգի	Մեռածների թիվը	Սպանվածների թիվը	Ընդամենը
Երևանի	20394	92928	32875	14344	47219
Թիֆլիսի	3191	13250	969	589	1558
Գանձակի	2279	6585	9720	1622	11346
Կարսի	2305	10324	16	-	16
Պարսկաստանի	2408	10454	723	524	1247
Էրզրումի	4551	20318	5225	2500	7725
Ընդամենը	35128	153859	49528	19579	69107[1]

Ինչպես երևում է գաղթականական ընտանիքների մեծ մասը տեղաբաշխվել էր Երևանի նահանգում: 35128 ցուցակագրված ընտանիքներից հեռացել էին 69107 հոգի, որոնցից մահացել էին՝ 49528, իսկ սպանվել էին՝ 19577 հոգի:

Հիշյալ աղյուսակը ներկայացնում է գաղթականների նյութական դրության ապշեցուցիչ տարբերությունը՝ տեղահանումից առաջ և հետո.

Նահանգները	Նյութական դրությունը						
	մինչև տեղահանությունը			տեղահանությունից հետո		դրամական արժեքը	
	I խումբ. (ընտանիք)	II խումբ. (ընտանիք)	III խումբ. (ընտանիք)	խոշոր եղջերավոր անասունների քանակը	մանր եղջերավոր անասունների քանակը	ռուբլի	կոպ.
Երևանի	2240	2777	15377	1036	410	65220	
Թիֆլիսի	594	550	2047	-	-	-	
Գանձակի	741	195	1370	-	-	-	
Կարսի	87	358	1860	893	1019	58675	
Պարսկաստանի	498	727	1183	47	1	2825	
Էրզրումի	653	747	3151	352	116	57700	
Ընդամենը՝	4786	5354	24986	2928	1748	184420[2]	

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.132, թ. 37:

[2] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.132, թ. 33:

Ցուցակի համաձայն 1500 ռ. ավելի ունեցողները դասվում էին գաղթականական I խմբի, 800-1500 ռ. ունեցողները՝ II խմբի, իսկ մինչև 800 ռ. ունեցողները՝ III խմբի ընտանիքներին: Մեկ եղջերավոր անասունը միջին թվով հաշվվում էր 60 ռ., իսկ մանր եղջերավորը՝ 5 ռ.[1]:

Հերթական աղյուսակը ցույց է տալիս մինչև տեղահանությունը փախստականների դասակարգումն ըստ մասնագիտությունների:

Նահանգները	Զբաղմունքների տեսակը			
	հողագործների թիվը	առևտրական-ների թիվը	արհեստա-վորների թիվը	մտավորական-ների թիվը
Երևանի	17449	1653	1184	108
Թիֆլիսի	2649	186	503	53
Գանձակի	2168	22	89	-
Կարսի	2132	149	23	1
Պարսկաստանի	2011	177	152	68
Էրզրումի	4223	150	150	28
Ընդամենը՝	29632	3337	1901	258[2]

Այսպիսով, 1916թ. հունվարի 14-ի վիճակագրության համաձայն 29632-ը՝ երկրագործներ էին, 3377-ը՝ վաճառականներ, 1901-ը՝ արհեստավորներ, 258-ը՝ մտավորականներ:

Վիճակագրական այլ տվյալներ

Քանի որ գաղթականների թվաքանակը նոր գաղթերի և տեղաշարժերի արդյունքում պարբերաբար փոփոխվում էր, հետևաբար անց էին կացվում նոր հաշվառումներ: Այդպիսի հաշվառումներից մեկի համաձայն 1916 թ. ամռանը Կովկասյան ողջ տարածաշրջանում և գրավված շրջաններում կային 286470 գաղթականներ, որոնցից՝ 80211-ը տղամարդիկ էին, 100264-ը՝ կանայք, իսկ 105995-ը՝ երեխաներ: Անաշխատունակ տղամարդիկ կազմում էին գաղթականական բնակչության 70%-ը[3]: Գաղթականների տեղաբաշխումը ներկայացնում էր հետևյալ պատկերը. Երևանի նահանգում՝ 93117, Գանձակի նահանգում՝ 6999, Ստավրոպոլի նահանգում՝ 5627, Թիֆլիսի նահանգում՝ 7400, Բաքվի նահանգում՝ 36, Թերեքի շրջանում՝ 3762, Կուբանի շրջանում՝ 14322, Կարսի շրջանում՝

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, թ. 36:

[3] ЦГАЛИ, ф.199, Д.Н. Жбанов, оп.1, д.117, л.10:

32590, Դաղստանի շրջանում՝ 53, Բաթումի շրջանում՝ 13000, Սևծովյան նահանգներում՝ 2048, Վանի շրջանում՝ 9240, Բայազետի շրջանում՝ 279, Դիադինի շրջանում՝ 7500, Արճեշի շրջանում՝ 443, Բաշկալեի շրջանում՝ 2631, Պարսկաստանում՝ 37000, Թուրքիայից նվաճված շրջաններում՝ 50390 հոգի[1]:

Մինչև 1916 թ. աշուն՝ կապված ռուսական զորքերի 1916 թ. հուլիս-օգոստոսյան և նոյեմբերյան նոր տեղաշարժերի հետ, գաղթականների թվաքանակը բազմացավ: Փախստականների գործի գլխավոր լիազորի դիվանատան հաղորդած տեղեկությունների համաձայն 1916 թ. հոկտեմբերի 1-ին Կովկասում փախստականների ընդհանուր թիվը կազմում էր՝ 366992, որից 28%-ը՝ տղամարդիկ էին, 36%-ը՝ կանայք և 37%-ը՝ երեխաներ[2]: Գաղթականները տեղաբաշխված էին հետևյալ շրջաններում՝ Ստավրոպոլի նահանգում՝ 7043, Կուբանի շրջանում՝ 16095, Թերեքի շրջանում՝ 3677, Սևծովյան նահանգներում՝ 3373, Բաթումի շրջանում՝ 12178, Թիֆլիսի նահանգում՝ 3484, Երևանի նահանգում՝ 115000, Կարսի շրջանում՝ 28093, Գանձակի նահանգում՝ 7994, Բաքվի նահանգում՝ 63, Դաղստանի շրջանում՝ 137 հոգի: Գաղթականներ կային նաև Թուրքիայից գրավված վայրերում՝ Վանի շրջանում՝ 20000, Բայազետի շրջանում՝ 89, Դիադինի շրջանում՝ 12000, Արճեշի շրջանում՝ 466, Ուրմիայի շրջանում՝ 22991, Խոյի շրջանում՝ 27650, Թավրիզի շրջանում՝ 1000, Լազիստանում՝ 20000, Տրապիզոնի շրջանում՝ 50000, Խնուս-Մուշի շրջանում՝ 4500, Էրզրումի նահանգում՝ 6255, Էրզրում քաղաքում՝ 1304, Բաբերդի շրջանում՝ 500 և Երզնկայի շրջանում՝ 4000 հոգի[3]:

1916 թ. դեկտեմբերի 1-ի վիճակագրությամբ ամբողջ Կովկասում և պատերազմի իրավունքով գրավված շրջաններում իրենց գրանցումն էին ստացել 373553 գաղթականներ[4]:

1917 թ. սկզբներին Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունից հետո Արևմտյան Հայաստանի վերաբնակեցման և ներգաղթի արդյունքում գաղթականության թվաքանակը փոքր ինչ նվազեց՝ հասնելով

---

[1] «Վան-Տոսպ», 1916թ. հուլիսի 24, թիւ 35, նաև «Արեւ», 1916թ. հուլիսի 20, թիւ 15, նաև «Հորիզոն», 1916թ. հուլիսի 15, թիւ 156, նաև «Армяне и война» 1916г. июль, № 5:

[2] ЦГВИА РФ, ф.13227, оп.1, д.41, л.38.

[3] «Աշխատանք», 1916թ. նոյեմբերի 2, թիւ 53, նաև «Մշակ», 1916թ. հոկտեմբերի 28, թիւ 242, նաև «Վան-Տոսպ», 1916թ. հոկտեմբերի 30, թիւ 49, նաև «Հորիզոն» 1916թ. հոկտեմբերի 27, թիւ 240:

[4] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.581, թ.7, նաև НАГ, ф.2080, оп.1, д.178, л.98.

283063-ի[1]: Իսկ փոքր ինչ ավելի ուշ՝ Գաղթականների թվաքանակը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում էլ ավելի պակասեց, երբ Անդրկովկասի խորհրդայնացումից հետո հետո գաղթականներից շատերը տեղափոխվեցին և իրենց օթևանը գտան Հյուսիսային Կովկաս: Այդ մասին մենք իմանում ենք Ս. Տեր-Գաբրիելյանին ուղղված Կովկասում գաղթականների Տարհանման կենտրոնի հատուկ ներկայացուցչի տեղակալի 1921թ. ապրիլի 2-ի նամակից, որտեղ նա նշում է, որ իրավիճակից և նյութական ոչ բարվոք կացությունից դրդված Հյուսիսային Կովկաս էին անցել 150000 գաղթականներ, որից 130000-ը հայեր էին, իսկ 20000-ը ասորիներ, հույներ[2]:

Եզրակացություն

Այսպիսով, 1. Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայությունը՝ ենթարկվելով երիտթուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանության և բռնագաղթի կանխամտածված քաղաքականությանը, կանգնեց սպառսպուռ բնաջնջման վտանգի դեմ հանդիման: Ողջ մնացածներից շատերը գաղթեցին և տեղափոխվեցին ինչպես աշխարհի տարբեր ծագեր, այնպես էլ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:

2. Պատմագիտական գրականության մեջ ցեղասպանությունից մի կերպ փրկված և Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում ապաստանած հայ գաղթականության ստույգ թվաքանակի վերաբերյալ նախկինում շրջանառվել են հակասական տվյալներ՝ սկսած 300 հազ. մինչև՝ 650 հազ.

3. Առաջին՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթը լուրջ դժվարություններ առաջ բերեց գաղթականների վիճակագրության կազմակերպման և անցկացման առումով: Նախատեսված մարդահամարն անցկացվեց 1915 թ. հունվարի 30-ին Վեհափառ հայրապետի տնօրինության ներքո գտնվող «Եղբայրական օգնության» կոմիտեի և «Զեմսկի միության» նախաձեռնությամբ ու հանձնարարությամբ: Այն բոլոր տեղերում կրում էր վիճակագրության մեկօրյա բնույթ: Հաշվառման ենթարկվեցին Երևանի նահանգի 7, այն է՝ Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Երևան քաղաքի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Նոր Բայազետի և Կարսի շրջանի՝ 4 գավառներում, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի

[1] «Աշխատանք», 1917թ. հունիսի 3, թիւ 10:

[2] ՀԱԱ, ֆ.123, ց.42, գ.2, թ.43:

գավառում ապաստանած գաղթականները: 1915 թ. հունվարի 30-ի վիճակագրական տվյալների համաձայն Օսմանյան Թուրքիայից ու Պարսկաստանից գաղթած և Արևելյան Հայաստանում հանգրվանած փախստականների ընդհանուր թվաքանակը կազմում էր շուրջ 67,000, որից մոտ 50,000-ը հայեր էին:

4. 1915թ. ամռանը Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած ռազմավարական տեղաշարժերի և կոտորածների արդյունքում կազմակերպված 1915 թ. հուլիսյան մահասարսուռ գաղթը պատճառ դարձան գաղթականության նոր ալիքի սկզբնավորման և ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ անդրկովկասյան տարածաշրջանում գաղթականության թվաքանակի ստվարացման, որի արդյունքում 1915 թ. հուլիսի 20–ից մինչև սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Կովկասյան երկրամասում փախստականների մոտավոր թվաքանակը հասավ 146,000: 1915թ. հոկտեմբերին Անդրկովկասում ապաստանել էին շուրջ 180,000 հայ փախստականներ, իսկ Կովկասյան ճակատի փախստականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն 1916թ. հունվարի 1-ին Կովկասյան երկրամասում արդեն իրենց հանգրվանն էին գտել շուրջ 182,800 գաղթականներ:

4.Գաղթականների թվաքանակում որոշակի ճշգրտումներ և հստակեցումներ մտցնելու նպատակով Քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի լիազոր Ա. Թամամշևի անմիջական նախաձեռնությամբ և հասարակական ու ազգային կազմակերպությունների օժանդակությամբ 1916թ. հունվարի 14-ին անցկացվեց գաղթականական առաջին ընդհանուր մարդահամարը, ըստ որի հայ գաղթականության ընդհանուր թիվը Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում կազմում էր՝ 184.859:

5. 1916 թ. ամռանը Կովկասյան ողջ տարածաշրջանում և պատերազմի իրավունքով գրավված շրջաններում էին ապավինել և իրենց գրանցումն էին ստացել 286,470 գաղթականներ, որոնց ընդհանուր թիվը 1916 թ. հոկտեմբերի 1-ին կազմում էր՝ 366,992, իսկ արդեն 1916թ. դեկտեմբերի 1-ի վիճակագրությամբ այն հասավ 373,553-ի: 1917 թ. սկզբներին Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունից հետո Արևմտյան Հայաստանի վերաբնակեցման և ներգաղթի արդյունքում գաղթականության թվաքանակը որոշակիորեն նվազեց՝ հասնելով 283,063-ի: Գաղթականների թվաքանակը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում էլ ավելի պակասեց, երբ Անդրկովկասի խորհրդայնացումից հետո 150000 գաղթականներ, (որից 130000-ը հայեր էին, իսկ 20000-ը ասո-

րիներ և հույներ) տեղափոխվեցին Հյուսիսային Կովկաս:

Բանալի բառեր՝ *գաղթականություն, վիճակագրություն, մարդահամար, 1915թ. հունվարի 30, 1916թ. հունվարի 14, Երևանի «Եղբայրական օգնության» կոմիտե, համառուսական «Զեմսկի միություն», Երևանի նահանգ, Մ. Պապաջանյան, Ա. Թամամշև, Վան:*

К ВОПРОСУ О ПОДСЧЕТЕ ЧИСЛА АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ И В ЗАКАВКАЗЬЕ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Аветис Арутюнян, Аршак Балян

Ключевые слова: *эмиграция, статистика, перепись, 30 января 1915 г., 14 января 1916 г., Ереванский комитет «Братской помощи», Всероссийский «Земский союз», Ереванская губерния, М. Пападжанян, А. Тамамшев, Ван.*

В статье представлена группа вопросов, касающихся уточнения и учета численности армянских эмигрантов, укрывшихся в Восточной Армении и Закавказье в годы Первой мировой войны. В частности, мы попытались осветить данные однодневной эмиграционной статистики, проведенной 30 января 1915 г., и результаты всеобщей эмиграционной переписи, проведенной 14 января 1916 г. Кроме того, мы представили также статистические сведения, зарегистрированные в Кавказском районе, в период с 20 июля по 18 сентября 1915 г., октября 1915 г., 1 января 1916 г., лета 1916 г., 1 октября 1916 г., 1 декабря 1916 г., в начала 1917 г., согласно которой число эмигрировавших колебалось от 67 000 до 373 553 человек.

ON THE QUESTION OF CALCULATING THE NUMBER OF ARMENIAN REFUGEES IN EASTERN ARMENIA AND IN TRANSCAUCASIA DURING THE FIRST WORLD WAR

Avetis Harutyunyan, Arshak Balyan

Key words: *emigration, statistics, census, January 30, 1915, January 14, 1916, Yerevan "Brotherly Aid" Committee, All-Russian "Zemski Union", Yerevan Province, M. Papajanyan, A. Tamamshev, Van.*

The article presents a group of questions regarding the adjustment and accounting of the number of Armenian emigrants who took refuge in Eastern

Armenia and Transcaucasia during the First World War. In particular, we tried to highlight the data of the one-day emigration statistics conducted on January 30, 1915 and the results of the general emigration census conducted on January 14, 1916. In addition, we have presented also statistical information recorded in the Caucasus region, in the period from July 20 to September 18, 1915, October 1915, January 1, 1916, summer 1916, October 1, 1916, December 1, 1916, at the beginning of 1917, according to which the number of emigration varied from 67,000 to 373,553 people.

Ավետիս Հարությունյան *– պատմ. գիտ. թեկն., ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ*

Аветис Арутюнян *- кандидат исторических наук, доцент кафедры истории Армении Армянского Государственного Педагогического Университета имени Хачатура Абовяна*

Avetis Harutyunyan *– PhD of Historical Sciences, associate Professor at Armenian history department of Armenian state pedagogical university after Kh. Abovyan*

Արշակ Բալյան *– պատմ. գիտ. թեկն., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ*

Аршак Балян *- кандидат исторических наук, доцент кафедры Истории Армянской церкви и Экклесиологии ЕГУ Факультета Богословия*

Arshak Balyan *– PhD in History, Associate proffesor of chair of Armenian Church History and Ecclesiology at the YSU Faculty of Theology*